Գիտնականները փորձ չունեն

ԱՆԻ ՇԱԲՈՅԱՆ

Հայաստանյան գիտնականները նորարարական գաղափարների առեւտրայնացման հնարավորությունները գնահատելու, բիզնես-պլան գրելու փորձ չունեն: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ այսպես պատճառաբանեց ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը վերջերս կառավարության կողմից նորարարական բնույթի նախագծերի մերժումը:

Հիշեցնենք, որ ԳԱԱ-ն կառավարությանն էր ներկայացրել 30 նախագիծ, որոնցից ընտրության արդյունքում սկզբում մնացել էին 4-ը, իսկ այժմ Ռադիկ Մարտիրոսյանի հավաստմամբ՝ ի վերջո ընդամենը մեկն է հավանության արժանացել: Այն ներկայացրել է Երեւանի ոսկերչական գործարանը: Մնացած նախագծերը կիրառության համար համարվել են ռիսկային: «Անհրաժեշտ է պետության կողմից առաջ քաշվի, թե ինչ նորույթ է պետք, եւ որն է շուկայի պահանջարկը, եւ ըստ դրա առաջարկներ ներկայացնեն: Գիտնականներն ինչպե՞ս կարող են իմանալ, որ նորույթն է անհրաժեշտ շուկային»,- ասաց Ռադիկ Մարտիրոսյանը: Խոսելով Հայաստանից երիտասարդ գիտնականների արտահոսքի մասին, ԳԱԱ նախագահը նշեց, որ նախկինում այդ երեւույթը անհամեմատ ավելի շատ էր, իսկ հիմա բավականաչափ կրճատվել է: «Երիտասարդ գիտնականներին Հայաստանում պահելը, իհարկե, մեզնից է կախված եւ իշխանություններից: Մենք պետք է կարողանանք սոցիալապես ապահովել նրանց: Այս առումով Սերժ Սարգսյանը որոշակի քայլեր է մտադիր անել: Մեր վերջին հանդիպման ժամանակ նա տեղեկացրեց, որ երիտասարդ գիտնականների համար նախատեսվում է մոտ 200 բնակարան տրամադրել հիպոթեքային վարկերով՝ 25 տարվա մարման ժամկետով, իսկ այն երիտասարդները, ովքեր բանակում ծառայել են, նրանց առաջին մուծումները կկատարի պետությունը»,- ասաց Ռադիկ Մարտիրոսյանը: Բացի այդ, ավելացրեց նա, մյուս խնդիրը հասարակության մեջ գիտաշխատողի վարկի բարձրացումն է. «Մենք պետք է փոխենք հանրության վերաբերմունքը: Հասարակությունն այսօր չի գնահատում գիտաշխատողին: Հարկավոր է այնպես անել, որ հասարակության մոտ գիտական աշխատանքը կրկին ձեռք բերի բարձր հեղինակություն: Նախկինում հպարտանում էին, եթե տան անդամներից մեկը գիտության թեկնածու էր, իսկ այժմ ավելի հարգված են բիզնեսով զբաղվողները: Մյուս կողմից էլ պետք է այնպես անենք, որ երիտասարդները հետաքրքրվեն, հետո նրանց համար ստեղծենք բարենպաստ պայմաններ»,- ասաց ԳԱԱ նախագահը: Ռադիկ Մարտիրոսյանն անդրադարձավ նաեւ գիտական Սիներիկ Հայրապետյանի հարցազրույցներից մեկում ասված այն մտքերին, թե երիտասարդ գիտնականներն առաջ գնալու համար դառնում են կուսակցական, եւ որ գիտության համար հատկացված միջոցները փոշիանում են. «Դրանք սուբյեկտիվ մոտեցումներ են, որոնցից շատ շատերը իրականությանը չեն համապատասխանում: Ես չգիտեմ մի գիտնական, որ կուսակցական ճանապարհով ինչ-որ առաջընթացի հասած լինի»,- զարմացավ Ռադիկ Մարտիրոսյանը: Իսկ ինչ վերաբերում է տրամադրված միջոցներին, ապա նշեց, որ «պիտի լինեն, որ փոշիանան»: Սակայն քիչ անց ասաց, որ եթե ԵՄ-ի կողմից ստեղծված գիտական կենտրոնի յուրաքանչյուր աշխատողին հատկացվում է 200 հազար եվրո, մեր ամեն մի գիտնականին տրամադրվում է 2000 եվրո: Այդ դեպքում ինչի՞ վրա են ծախսվում այդ միջոցները: Բայց, խոսելով այն երեւույթի մասին, որ շատ պաշտոնյաներ հանկարծակի դառնում են ինչ-որ բուհի շրջանավարտ կամ ստանում են դոկտորի կամ պրոֆեսորի կոչում, չկարողացավ ժխտել իրականությունը. «Այն, որ շատ պաշտոնյաներ դառնում են գիտության թեկնածուներ եւ դոկտորներ, չեմ կարող ժխտել, բայց մենք չենք կարող մերժել այդ մարդկանց, քանի որ նրանք միաժամանակ ունեն ձիրք, փորձ եւ համատեղում են գիտական աշխատանքը կամ կիսատ մնացած գիտական աշխատանքը, բայց ճշմարտությունն իրոք այն է, որ նրանց թիվը շատ է, եւ նրանցից շատ քչերն են հետագայում զբաղվում գիտական աշխատանքով: Բերեմ կոնկրետ օրինակ՝ ըստ ԲՈՒՀ-ի տվյալների, պաշտպանածների միայն 10 տոկոսն է, որ աշխատում է այդ ասպարեզում: Իհարկե սա էլ ԲՈՒՀ-ի թերությունն է, բայց ո՞ր բնագավառում այսօր չկան թերություններ»,- ասաց ԳԱԱ նախագահը: Վերջում Ռադիկ Մարտիրոսյանը նշեց նաեւ, որ ակադեմիայի կարեւոր խնդիրներից է տեխնիկայի արդիականացումը: Դրա նորացման համար Ռադիկ Մարտիրոսյանն ասաց, որ նվազագույն հաշվարկներով մոտ 100 մլն դոլար գումար կպահանջվի: Մյուս կարեւոր խնդիրը սերնդափոխությունն է: Չնայած Ռադիկ Մարտիրոսյանի խոսքերով՝ վերջինիս հետ կապված որոշակի առաջընթաց է նկատվել. անցյալ տարի 160 երիտասարդներ են ընդունվել ԳԱԱ: